ԱՄՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ԻՐԱՔՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Գագիկ Հարությունյան

Հոդվածում փորձ է արվել ընդհանրացնել տեղեկատվական դաշտում տեղ գտած այն վարկածները և մոտեցումները, որոնք իրաքյան հիմնախնդրի համատեքստում առնչվում են ԱՄՆ ռազմավարության հետ: Ներկայացվում են դրդապատճառները, որոնք ԱՄՆ ղեկավարության համար հիմք հանդիսացան 2003թ. գարնանը ռազմական գործողություններ սկսել Իրաքի դեմ և տապալել Սադամ Հուսեյնի վարչակարգը: Քննարկվում են այդ քայլի հետևանքով ստեղծված իրավիճակը և դրա ազդեցությունը Միացյալ Նահանգների հետագա քաղաքականության վրա: Մեկնաբանվում են ԱՄՆ աշխարհաքաղաքական նպատակները և քաղաքակրթական առաքելությունն իրագործելու համար կիրառվող հայեցակարգերը: Մերձավոր Արևելքում ծագած համակարգային բնույթի բարդությունները խթանում են ԱՄՆ մենատիրական առաջատարության դեմ ուղղված քաղաքական կամքի կենտրոնների ձևավորումը: Չձևավորվող մարտահրավերների համախումբը կարող է թելադրել Միացյալ Նահանգներին կիրառել ոչ ավանդական բնույթի ռազմավարական մոտեցումներ իր կողմից վարվող գլոբալ հակաահաբեկչական պատերազմում: Դա, իր հերթին, կարող է հանգեցնել ռազմաքաղաքական զարգացումների, որոնց սցենարներն այսօր վիճարկվում են վերլուծական հանրության կողմից:

Ներածություն

Ինչպես հայտնի է, ս.թ. հունիսի 28-ին իշխանությունն Իրաքում հանձնվեց որոշակի իրավասություններով լիազորված տեղական իշխանություններին[1]: Այդ արարողությունը, ինչպես նաև ՄԱԿ-ի ավելի վաղ ընդունած որոշումը (որն ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի, Չինաստանի, Ռուսաստանի միջև մասնակի փոխհամաձայնության հետևանք էր) փոխեցին Իրաքում տեղակայված ԱՄՆ և նրա դաշնակիցների մոտ 150 հազարանոց զինուժի կարգավիճակը. դրանք այդուհետ կոչվում են ոչ թե օկուպացիոն, այլ ՄԱԿ-ի որոշումով լեգիտիմացված ուժեր: Խոսվում է նաև այն մասին, որ զինուժը կարող է դուրս բերվել Իրաքից, եթե այդ երկրում 2005թ. սպասվելիք ընտրությունների արդյունքում ձևավորված իշխանությունները նման հարց բարձրացնեն:

[1] Իշխանության հանձնման արարողությունը նախապես հայտարարված էր հունիսի 30-ին: Ժամկետի տեղափոխումը պաշտոնապես չմեկնաբանվեց: Համաձայն մի վարկածի՝ փոփոխությունը կատարվեց անվտանգության նկատառումներով, սակայն բացառված չէ, որ այդպես արվեց« որ իշխանության հանձնման արարողությունը համընկնի ՆԱՏՕ-ի ստամբուլյան վեհաժողովի աշխատանքներն սկսվելուն:

Վերոհիշյալ որոշումները և քայլերը պետք է ընկալել որպես իրաքյան հիմնախնդրի հետ կապված զարգացումների մի հերթական փուլի ավարտ և նորի սկիզբ: Սակայն, ըստ էության, դրանք սկզբունքորեն չփոխեցին Իրաքում և տարածաշրջանում տիրող իրավիճակը. նախկինի պես շարունակվում են այս կամ այն տիպի ամենօրյա ռազմական գործողությունները, ինչը հիմք է տալիս համոզմունք հայտնել, որ ԱՄՆ և առավել ևս՝ իրաքյան նոր իշխանությունների կողմից իրադրությունը դեռ չի վերահսկվում: Համաձայն ՁԼՄ-ում և վերլուծական գրականությունում հայտնված հիմնավորված կանխատեսումների, ստեղծված իրավիճակի բարելավում դեռևս չի սպասվում: Ավելին, վերլուծական հանրության զգալի մասի կողմից իրադրությունն Իրաքում ընկալվում է եթե ոչ ճգնաժամային, ապա՝ բա-վական մոտ այդ իրավիճակին:

Սակայն անկախ այդ տարածաշրջանի իրավիճակին տրված գնահատականների նրբություններից, կարելի է ենթադրել, թե այն, ինչ կատարվում է Իրաքում, սկզբունքային նշանակություն ունի ոչ միայն Մերձավոր Արևելքի, այլև ԱՄՆ՝ որպես գերտերության, ապագայի համար: Կախված զարգացումների ընթացքից և բնույթից՝ վերջին հանգամանքն իր հերթին կարող է հանգեցնել գլոբալ տեղաշարժերի: Նման կարգի փոփոխությունների օրինակ կարող է հանդիսանալ ԽՍՀՄ կազմալուծումը: Հաշվի առնելով համաշխարհային քաղաքատնտեսական համակարգի վրա ԱՄՆ ունեցած ազդեցության ավելի համատարած բնույթը, համակարգային փոփոխությունների հետևանքն իրենց վրա կզգան ժամանակակից քաղաքականության գրեթե բոլոր սուբյեկտները: Նկատենք, որ զարգացումները Մերձավոր Արևելքում արդեն իսկ էապես ազդում են այլ տարածաշրջանների, այդ թվում նաև Հարավային Կովկասի իրավիճակի վրա: Այդ առումով ԱՄՆ ռազմավարության ուսումնասիրումն իրաքյան հիմնախնդրի համա-տեքստում արդիական է և հրատապ:

Միևնույն ժամանակ ԱՄՆ քաղաքականության մեխանիզմների ուսումնասիրությունը ենթադրում է հարցերի մի ստվար համախմբի քննարկում, ինչը գործնականում անհնարին է իրագործել հոդվածի ձևաչափում: Սույնով ընդամենը փորձ է կատարվում ինչ-որ չափով համակարգել «իրաքյան պատերազմի» ժամանակաշրջանին վերաբերող տեղեկատվության որոշ մասը: Այդ տրամաբանության սահմաններում, մասնավորապես, կարևորություն է ստանում այն դրդապատճառների վերլուծությունը, որոնք Իրաքի դեմ ռազմական գործողություններ սկսելու հիմք հանդիսացան ԱՄՆ ղեկավարության համար:

1. Իրաքյան պատերազմի դրդապատճառները

2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունն առիթ հանդիսացավ ամերիկյան լայնածավալ աշխարհաքաղաքական ծրագրերի իրագործման համար (տե՛ս, օրինակ, [1,2])։ Համաձայն որոշ աղբյուրների, արդեն 2001թ. նոյեմբերի 1-ին նախագահ Բուշը հանձնարարում է պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդին Իրաքի դեմ պատերազմի պլաններ ներկայացնել [3, c. 15]։ Սակայն անգլո-սաքսոնյան քաղաքական ավանդույթը պահանջում է, որ իրենց ձեռնարկած ռազմական գործողությունները հիմնավորվեն և հրամցվեն հանրությանը որպես «արդարացի պատերազմ»։ Այդ տեսանկյունից սեպտեմբերի 11-ին հետևած «թալիբանյան» Աֆղանստանի դեմ պատերազմը, չնայած իր աշխարհաքաղաքական բովանդակությանը, ուղղված էր ահաբեկչության անմիջական կազմակերպիչների դեմ և այդպիսով բավարարում էր «արդարացի պատերազմի» վերաբերյալ ամերիկյան հասարակության պատկերացումները։

Ի տարբերություն աֆղանականի, իրաքյան պատերազմը հանրության համար հիմնավորումների կարիք ուներ։ Մինչդեռ Պարսից ծոցում ռազմական գործողություններ սկսելու դրդապատճառները միանշանակ չեն ոչ միայն «պիառային», այլև վելուծաբանական հարթությունում։

Քարոզչական վարկած: Իրաքի դեմ հարձակումն «արդարացի պատերազմ» ներկայացնելու նպատակով տեղեկատվական շրջանառության մեջ դրվեցին հասկացություններ, որոնց նպատակն էր ձևավորել Սադամ Հուսեյնի՝ որպես ԱՄՆ թշնամու, կերպարը։ Քարոզչական ռազմավարության հիմքում դրված էին հետևյալ դրույթները.

Բռնապետ Սադամ Հուսեյնի վարչակարգը, համագործակցելով սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունը կազմակերպած «Ալ Քաեդայի» հետ, մշակում է զանգվածային ոչնչացման զենք (*ԶՈԶ*) և այդպիսով սպառնում ոչ միայն ԱՄՆ, այլև ողջ քաղաքակիրթ աշխարհի անվտանգությանը։

Տապալելով Հուսեյնի վարչակարգը՝ ԱՄՆ-ը փրկում է աշխարհը վտանգից։ Միևնույն ժամանակ, հետևելով իր ժողովրդավարական իդեալներին, ԱՄՆ-ը ազատագրում է Իրաքի ժողովրդին բռնապետությունից։

Առաջին թեզը կրում էր ոչ միայն քարոզչական ծանրաբեռվածություն, այլև ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի պաշտոնական հիմնավորումն էր միջազգային ատյաններում ու այդ երկրների օրենսդիր մարմիններում։ Ինչպես հայտնի է, Իրաքի տարածքում *ԶՈԶ* չհայտնաբերվեց։ Բնորոշ է, որ գրեթե զուգահեռաբար ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում այդ վարկածը ենթարկվեց քննադատության և ի վերջո հանգեցրեց այդ երկրների հետախուզական կառույցների ղեկավարների հեռացմանը։ Պաշտոնապես հայտարարվեց,

թե հատուկ ծառայություններն իշխանություններին *ՋՈՋ* վերաբերյալ չստուգված տեղեկատվություն էին մատուցել:

Ի սկզբանե ակնհայտ էր, որ տարիներ շրջափակման մեջ գտնվող Իրաքն ուղղակի ի վիճակի չէր ստեղծել *ՋՈՋ*: Դժվար էր նաև պատկերացնել, որ աշխարհիկ հայացքների տեր և արմատական իսլամի հակառակորդ Սադամը կհամագործակի ծայրահեղ արմատական Բեն Լադենի հետ[1]: Այսպիսով՝ ներկայացված դրդապատճառները ի սկզբանե քարոզչական բնույթ էին կրում: Դրանք ընկած էին տեղեկատվական–հոգեբանական ազդեցության գործողությունների և հանրության հետ հարաբերությունների ոլորտում: Միևնույն ժամանակ քարոզչական վարկածի գաղափարախոսությունը համընկնում է *գերկանխարգելիչ դոկտրինայի* դրույթներին *(տե՛ս, 3-րդ ենթաբաժին):*

«Նավթի գործոնը»: Մեկնաբանների զգալի մասը իրաքյան պատերազմի հիմնական դրդապատճառը կապում էր նավթի գործոնի հետ (տե՛ս, օրինակ, [4, էջ 13]): Ըստ տարբեր աղբյուրների, Մերձավոր Արևելքում են գտնվում, նավթի համաշխարհային պաշարների մինչև 65%-ը, գազի՝ մինչև 34%-ը: Իրաքում է գտնվում հետախուզված նավթի պաշարների մինչև 15%-ը, և այդ նավթի ինքնարժեքը խիստ էժան է (բարելը՝ $1, այն դեպքում, երբ սիբիրյան կամ հյուսիսծովյան նավթի ինքնարժեքը հասնում է $15):

«Նավթային վարկածի» կողմնակիցները գտնում են, որ ԱՄՆ ազգային շահերը պահանջում են, որպեսզի չկրկնվի նախորդ դարի 70-ականներին ստեղծված իրավիճակը, երբ արաբական երկրները արաբա-իսրայելական պատերազմի առիթով հրաժարվեցին էներգակիրներ մատակարարել ԱՄՆ-ին: Ի լրումն դրա հղումներ էին կատարվում նաև ԱՄՆ Ազգային հետախուզական խորհրդի[2] այն կանխատեսումներին, համաձայն որոնց՝ 2015թ. մերձավորարևելյան նավթի զգալի մասն օգտագործելու են Չինաստանը և Հնդկաստանը, ինչը «նավթային վարկածի» կողմնակիցները համարում են անընդունելի ԱՄՆ-ի համար: Որպես աշխարհատնտեսական վարկածի ճյուղավորում կարելի է դիտարկել ԱՄՆ-Սաուդյան Արաբիա հարաբերություններում գոյացած լարվածությունը: Այդ ամենի պատճառով, գտնում են «նավթային վարկածի» կողմնակիցները, անհրաժեշտ էր գրավել Իրաքը և ուժային վերահսկում սահմանել Մերձավոր Արևելքի էներգակիրների պաշարների վրա:

[1] 2001 թվականի սեպտեմբերի 11-ի դեպքերը ուսումնասիրող ԱՄՆ Կոնգրեսի հանձնաժողովը Ս.Հուսեյնի և Բեն Լադենի միջև որևէ կապ չի հայտնաբերել: Իսկ Ռուսաստանի նախագահի այն հայտարությունը, թե Իրաքի հատուկ ծառայությունները և «Ալ Քաեդան» համատեղ ահաբեկչություն էին ծրագրել ԱՄՆ-ի դեմ, հավանաբար գտնվում է քաղաքական հարթությունում:

[2] NIC (National Intellgence Consul , Global Trends 2015

Անշուշտ, նավթը կարևորագույն աշխարհատնտեսական գործոն է: Սակայն լրահոսերից ձևավորված տպավորությունն այնպիսին է, որ 2002-2003թթ. ճնշումների արդյունքում Սադամ Հուսեյնի վարչակարգը էներգակիրների ոլորտում պատրաստ էր գնալ ցանկացած զիջման ԱՄՆ-ին: Դա վկայում է այն մասին, որ նավթային գործոնը պատերազմ սկսելու համատեքստում կարևոր, բայց ոչ առաջնային դերակատարում ուներ:

Իսրայելական գործոնը. «նեոկոնսերվատորները» և «քրիստոնյա սիոնիստները»: Համաձայն այս մոտեցման, Իրաքը սպառնալիք էր ոչ թե ԱՄՆ, այլ Իսրայելի համար: ԱՄՆ հրեական լոբբին, ինչպես նաև իշխանության օղակներում մեծ ազդեցություն ունեցող «նեոկոնսերվատորները» (որոնք համարվում են վարչակազմի գաղափարախոսները), օգտագործելով իրենց հնարավորությունները, հրահրել են ԱՄՆ-ին պատերազմել Իրաքի դեմ և տապալել Սադամի վարչակարգը:

Ներկայացված խնդիրը հաճախ խեղաթյուրվում և այդպիսով մարգինալացվում է տարբեր բնույթի ծայրահեղականների կողմից: Միևնույն ժամանակ Իսրայելը ԱՄՆ ռազմավարական դաշնակիցն է Մերձավոր Արևելքում, իսկ ԱՄՆ-ում հրեական լոբբիի ավանդական գործունեությունը լրացուցիչ լուսաբանման կարիք չունի:

Ինչ-որ չափով նորույթ է, այսպես կոչված, «նեոկոնսերվատորների» (նրանց անվանում են նաև «նեոկոններ» կամ «նեոիմպերիալիստներ») աճող ազդեցությունն ամերիկյան քաղաքականությունում: «Նեոկոնները» ամերիկյան կայսերապաշտության ջատագովներն են, նրանք քարոզում են հօգուտ միաբևեռ աշխարհի, ընդդեմ ՄԱԿ-ի ու ազգային պետության գաղափարի (տե՛ս, օրինակ, [5, էջ 16]): Քաղաքական այս հոսանքի ներկայացուցիչներից են պաշտպանության փոխնախարար Պոլ Վուլֆովիցը, այդ նախարարության բարձրաստիճան պաշտոնյաներ Ռիչարդ Պերլը, Դուգլաս Ֆեյտը, նրանց են հարում փոխնախագահ Դիկ Չեյնին, պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդը, անվտանգության հարցերով նախագահի խորհրդական Քոնդոլիզա Ռայսը և այլոք[1]: «Նեոկոնների» գաղափարական արմատները տանում են դեպի անցյալ դարի 30-40-ական թթ. ամերիկյան հրեաների տրոցկիստական շարժումը, որը 50-70- ականներին փոխակերպվեց հակակոմունիստական ազատականության, իսկ հետագայում՝ ռազմատենչ կայսերապաշտական աջ ուղղության: Ոմանք համարում են, որ նեոկոնսերվատիզմը տրոցկիզմի և աջ սիոնիզմի յուրօրինակ խառնուրդ է, որը պատվաստվել է ամերիկյան քաղաքական իրականությանը: ԶԼՄ-ում բերվում են փաստեր և ենթադրություններ, թե «նեոկոննե-

[1] Տե՛ս, http://www.aei.org/news/newsID.16723/news_detail.asp

ը» իսրայելական «Լիքուդ» կուսակցության անդամ են (վերջինիս առաջնորդը վարչապետ Արիել Շարոնն է)։ «Նեոկոնների» ջանքերն ուղղված են մասնավորապես Մերձավոր Արևելքում Իսրայելի անվտանգության հարցերը լավագույնս լուծելուն։ ԱՄՆ ռազմավարության մասին նրանց պատկերացումները և հայտարարությունները կարծես թե հաստատում են այս կարծիքը։

Սակայն միայն հրեական լոբբին և «նեոկոնները» չեն, որ նույնացնում են Միացյալ Նահանգների և Իսրայելի ազգային շահերը։

Հայտնի է, որ եկեղեցական համայնքները և կրոնական կազմակերպությունները մեծ ներգործություն ունեն ԱՄՆ ներքին և արտաքին քաղաքականության վրա։ Հասարակական կյանքում առանձնապես ազդեցիկ է բողոքական–բապտիստական եկեղեցին։ Օրինակ՝ հեռուստաքարոզիչներ Ջերի Ֆաուլլը և Պետ Ռոբերտսոնը, որոնք հարում էին աջ հանրապետականներին (վերջիններիս, «նեոկոնսերվատորներից» տարբերելու համար, կոչում են «պալեոկոնսերվատորներ»), մեծապես նպաստեցին 80-ականներին Ռոնալդ Ռեյգանին նախագահ ընտրվելու ու վերընտրվելու գործում։ Այսինքն՝ ԱՄՆ-ում բողոքական–բապտիստական եկեղեցու մոտեցումները կարևոր քաղաքական գործոն են։ Այդ փաստի վրա, մասնավորապես, ուշադրություն է հրավիրում Բորիս Մեժուևը [6]։

Ըստ նրա, ԱՄՆ ավանդական աջակցությունը Իսրայելին պայմանավորված է ոչ միայն հրեական լոբբիի, այլև «սպիտակ բողոքական մեծամասնության» գործունեությամբ։ Նրանց կողմից ստեղծված «Բարոյական մեծամասնություն» շարժումը ոչ միայն պաշտպանում է իսրայելական շահերը ԱՄՆ-ում, այլև, օրինակ, ֆինանսավորում է Իսրայելի այն աջ կուսակցություններին, որոնք ձգտում են պահպանել հրեական բնակավայրերը Գազայի հատվածում։ Հատկանշական է, որ այս շարժմանը հարողները սեմիտաֆիլներ չեն։ Սակայն նրանք առաջնային են համարում Հին Կտակարանի պատգամները և համոզված են, որ այն ամենը, ինչ ասված է Հին Կտակարանում, պետք է իրագործվի։ Մասնավորապես նրանք գտնում են, թե քանի որ Եհովան է Իսրայելին տվել Ավետյաց երկիրը, ապա այն պետք է պատկանի հրեաներին և վերականգնվի Սողոմոնի և Դավիթ արքայի ժամանակաշրջանում եղած տարածքի չափերով։ Այդ մոտեցումն անվանում են «քրիստոնեական սիոնիզմ», քանի որ այն յուրօրինակ կերպով հա-մահունչ է սիոնիզմի որոշ դրույթներին։

Բնորոշ է, որ այսօրվա «քրիստոնեական սիոնիզմի և «պալեոկոնսերվատիզմի» ներկայացուցիչներն ու «նեոկոնները», չնայած ԱՄՆ ներքին և արտաքին քաղաքականության որոշ հարցերում եղած տարաձայնություններին, Իսրայելին հովանավորելու խնդրում ունեն մոտ հայացքներ։ Այս-

պիսով՝ պետք է ընդունել, որ այս ուղղություններն էապես նպաստել են ԱՄՆ մերձավորարևելյան քաղաքականությունում Իսրայելի գործոնին առաջնային տեղ հատկացնելու գործում:

Աշխարհաքաղաքական դրդապատճառներ: Համաձայն իսրայելական աղբյուրների, իրաքյան պատերազմի աշխարհաքաղաքական համալիր հիմնավորումը ներկայացրել է «Ամերիկյան ձեռներեցության ինստիտուտն» (*AEI*)[1] իր «ԱՄՆ գեո-ստրատեգիական շահերի համապատասխան վերագնահատումը Ասիայում և Աֆրիկայում» զեկուցագրում[2]: Այդ փաստաթուղթը պատրաստ էր մինչև 2000թ. ԱՄՆ նախագահական ընտրությունները և ներկայացվել էր ապագա նախագահ Ջորջ Բուշ կրտսերի թիմին [7,8]: Հատկանշական է, որ զեկույցում քննադատության էր ենթարկվում Բիլ Քլինթոնի վարչակազմի «փափուկ» արտաքին քաղաքականությունը:

AEI-ի զեկույցի համաձայն, Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի մի շարք պետությունների՝ Իրաքի, Իրանի, Աֆղանստանի, Լիբիայի և Սուդանի վարչակարգերն ունեն «հակաամերիկյան» կողմնորոշում, ինչը վտանգում է ԱՄՆ աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական և ռազմավարական շահերն այդ տարածաշրջաններում: Նշվում է, որ էներգետիկ ոլորտում ԱՄՆ եվրոպական և արաբական մրցակիցները խիստ ակտիվ են: Հատուկ ընդգծվում էր նաև ԱՄՆ էներգետիկ կախվածությունը Սաուդյան Արաբիայից, ինչն ապագայում կարող է վտանգել անգամ ԱՄՆ գոյությունը:

Զեկույցի խորհրդատվական բաժնում կոչ է արվում հրաժարվել նախկին «ժողովրդավարական» և «խաղաղասիրական» նկատառումներից և գործել առավելագույնս կոշտ մեթոդներով: Խորհուրդ էր տրվում հենվել ոչ թե Պետդեպարտամենտի «հանրային քաղաքականության» (որը դադարել է արդյունավետ գործել ստեղծված պայմաններում), այլ ԿՀՎ գաղտնի գործողությունների վրա: Վերջինիս նպատակը պետք է լինի հակաամերիկյան վարչակարգերի և հատկապես Սադամ Հուսեյնի վարչակարգի տապալումը:

Ըստ *AEI* վերլուծաբանների, իրաքյան վարչակարգի փոփոխությունը հսկայական աշխարհաքաղաքական օգուտներ կբերեր ԱՄՆ-ին և կնպաստեր նրա դիքերի ամրապնդմանը ոչ միայն Մերձավոր և Միջին Արևելքում, այլև անդրկովկասյան հանրապետություններում: Միևնույն ժամանակ «նոր Իրաքը» հենակետ կհանդիսանար ԱՄՆ-ի համար ընդդեմ Իրանի (այս երկրի՝ որպես հարձակման հաջորդ օբյեկտի, նկատմամբ եղած ծրագրերը

[1] «American Enterprise Institute for Public Policy Research». ԱՄՆ Հանրապետական կուսակցությանը սպասարկող հեղինակավոր վերլուծական կենտրոններից մեկն է: Այսօր այդ հաստատությունում էական դերակատարում ունեն «նեոկոնսերվատորները»:
[2] «Appropriate reevaluation of US geo-strategic interests in Asia and Africa».

առանձին քննարկման առարկա են), Սիրիայի և Սաուդյան Արաբիայի՝ մասնավորապես նվազեցնելով ԱՄՆ էներգետիկ կախվածությունը վերջինից: Բնորոշ է նաև, որ վերլուծաբանների ուշադրության կենտրոնում էին ոչ միայն նավթի, այլև ջրային պաշարների խնդիրները: Հատկապես հիշատակվում էին Իրաքյան Քուրդիստանում գտնվող Տիգրիսի վտակները և ջրամբարները:

Կարելի է ենթադրել, որ *AEI*-ի զեկույցը համալիր աշխարհաքաղաքական-վերլուծաբանական հիմնավորում է հանդիսացել ԱՄՆ հանրապետական վարչակազմի համար ոչ միայն Իրաքի դեմ պատերազմելու, այլև գլոբալ «հակաահաբեկչական» պատերազմի ռազմավարությունը մշակելու առումով:

Մեսիական-քաղաքակրթական դրդապատճառներ: ԱՄՆ ղեկավարությանը իրաքյան *ՋՈՋ* վերաբերյալ ոչ ճշգրիտ տեղեկատվություններ տալու համար ամերիկյան հատուկ ծառայությունների դերը հետաքննելուց հետո Սենատի հետախուզության կոմիտեի ղեկավար Պետ Ռոբինսոնը նկատեց. *«Մենք պարտավոր ենք սանձահարել աճող մեսիական տրամադրությունները»*[1]: Ամերիկյան ռազմավարության իռացիոնալ բաղադրիչներն ընկալելու տեսանկյունից *մեսիականություն* հասկացությունը, թերևս, առանցքային է: ԱՄՆ քաղաքականությունում *մեսիականությունը* արտահայտվում է որպես ամերիկյան քաղաքակրթական մոդելի գլոբալ գերակայության ձգտում:

Որոշ հեղինակներ հակված են կարծել, թե *մեսիականությունն* ամերիկյան արտաքին քաղաքականությունում ներդրել են «նեոկոնները»: Սակայն դա պարզունակ մոտեցում է: Նեոկոնսերվատիզմն ընդամենը ամերիկյան կայսերապաշտության ածանցյալն է: *Մեսիականության սինդրոմը* կայսերական գաղափարախոսության (կամ այլ խոսքերով՝ գեոգաղափարախոսության) զարգացման հետևանք է: Ինչպես անցյալում, այնպես էլ մեր օրերում *մեսիականությունը* հաճախ արտահայտվում է մտածված *տեղեկատվական գործողությունների* տեսքով: Օրինակ՝ նախագահ Ջ. Բուշն իր հրապարակային ելույթներում հաճախ է դիմում Աստծուն և նախախնամությանը՝ հայտարարելով, որ նրանք են դրդում իրեն կատարելու այս կամ այն քայլը[2]:

Մերձավորարևելյան քաղաքականության համատեքստում ենթադրվում էր, որ Սադամ Հուսեյնին տապալելուց հետո Իրաքը վերածվելու է ժողովրդավարական և տնտեսապես բարգավաճող երկրի, որը մոդել է

[1] «Эксперт», 2004, #27(427), с.76.
[2] http://lenta.ru/oddly/2004/01/16/drinker/

հանդիսանալու Մեծ Մերձավոր Արևելքի պետությունների համար [9]: Իրաքում հաստատված «դրախտային պայմանները» ստիպելու են տարածաշրջանի այլ երկրների նույնպես ժողովրդավարական բարեփոխումներ իրականացնել (այս հարցում հատկապես կարևորվում է թեոկրատիկ Իրանը): Բնորոշ է, որ նման մոտեցումների ջատագովները գտնում են, որ եթե, օրինակ, Սիրիան, Սաուդյան Արաբիան կամ անգամ Եգիպտոսը ինքնակամ չհետևեն Իրաքի ժողովրդավարացման օրինակին, ապա նրանց հետ ԱՄՆ-ը պետք է վարվի առավելագույնս խիստ՝ ստիպելով այդ երկրներին ենթարկվել ամերիկյան քաղաքակրթական պահանջներին:

Հետևություններ: Մերձավոր Արևելքում ռազմական գործողություններ սկսելու ԱՄՆ մտադրությունն ուներ բազմաթիվ ընդիմադիրներ՝ ի դեմս վերլուծական կենտրոնների, քաղաքական գործիչների և առաջատար երկրների ղեկավարների: Նրանք նախազգուշացնում էին սպասվող բարդությունների մասին և ընդգծում, որ ԱՄՆ-ի նման քայլը ոչ միայն ծանր դրության մեջ կդնի ամերիկացիներին, այլև կխախտի հավասարակշռությունը մերձավորարևելյան տարածաշրջանում և այլուր: Սպիտակ տան քաղաքականության ամերիկյան քննադատները մատնանշում էին նաև հարցի ֆինանսական կողմը. եթե առաջին՝ 1991թ. իրաքյան պատերազմում պահանջվող $66 մլրդ-ի 80%-ը տրամադրեցին դաշնակիցները, ապա ներկայում ԱՄՆ ծախսել է $200 մլրդ և պատրաստ է ինքը վճարել այս կամ այն երկրին, որպեսզի նրանք մասնակցեն իրաքյան գործերին:

Դժվար է ենթադրել, թե ամերիկացիները Իրաքում դիմադրության չէին սպասում: Օրինակ՝ մշակվել էր քաղաքում վարվող ռազմական գործողությունների մի հայեցակարգ, որից բխում էր, թե քաղաքի պայմաններում պարտիզանական պատերազմը պակաս վտանգավոր չէ, քան անգամ ջունգլիներում վարվողը (որի փորձը ամերիկացիները ձեռք էին բերել Վիետնամում): Վերջապես, առկա էր պաղեստինա-իսրայելական հակամարտության օրինակը, երբ Իսրայելի ռազմատեխնիկական հսկայական առավելությունը և տասնամյակների փորձը չեն բավարարում պաղեստինցիների նկատմամբ վճռական հաղթանակի հասնելու համար: Միևնույն ժամանակ ԱՄՆ ղեկավարության՝ Իրաքի դեմ ընդունած որոշումը նույնպես ունի իր տրամաբանությունը:

ԱՄՆ-ը՝ որպես գերտերություն, ունի իր նկրտումները, որոնք հավասարազոր մրցակիցների բացակայության պարագայում, մասնավորապես, նյութականացվում են էքսպանսիոնիզմի (ծավալապաշտության) տեսքով, և իրաքյան պատերազմի հիմնական դրդապատճառը պետք է փնտրել այս հարթությունում: Աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական գոր-

ծոնների համալիրը (որ ներկայացված էր *AEI*-ի զեկուցագրում) թելադրում էր, որպեսզի ներկայում այդ էքսպանսիան կատարվի հատկապես Իրաքի ուղղությամբ: Այդ նույն տրամաբանությունից բխում է, որ ԱՄՆ հարձակողական քաղաքականությունը ենթադրում է ուժային գործողություններ մերձավորարևելյան այլ երկրների, մասնավորապես Իրանի նկատմամբ:

Որոշումների ընդունման մեխանիզմում իր դերն է ունեցել Միացյալ Նահանգների և Իսրայելի ազգային շահերի համատեղումը և անգամ նույնացումը: Կարելի է արձանագրել, որ ԱՄՆ-Իսրայել փոխհարաբերությունները, բացի ռազմավարական գործընկերությունից, ձեռք են բերել քաղաքակրթական միասնության բովանդակություն: Թերևս այդպիսով բացատրվում է «հուդդա-քրիստոնեական քաղաքակրթություն» եզրը, որին մասնավորապես կարելի է հանդիպել Հանթինգտոնի աշխատությունում [10]: Այդ եզրի «քրիստոնեական» մասը գլխավորապես վերաբերում է ամերիկյան հանրությանը:

Վերջապես, կարևոր է ընդգծել, որ իրաքյան պատերազմի դրդապատճառները ներառում են նաև գեոգաղափարախոսական-մեսիական, իռացիոնալ բնույթի գործոններ:

2. Իրաքյան պատերազմի հետևանքները

ԱՄՆ հակաահաբեկչական ռազմավարության արդյունքում ձևավորվել է մի նոր աշխարհաքաղաքական իրավիճակ, որը, չնայած բազմաթիվ մեկնություններին, շարունակական վերլուծությունների կարիք ունի: Այս համատեքստում թերևս արժե է փորձ կատարել համակարգելու գլոբալ և տարածաշրջանային նշանակության այն միտումները, որոնք ուրվագծվում են իրաքյան պատերազմի արդյունքում:

«Տեղեկատվական կերպարի» վատթարացում: Հայտնի է, որ ԱՄՆ ռազմավարության կարևոր բաղադրիչներից են հմուտ կազմակերպված և նպատակաուղղված *տեղեկատվական գործողությունները*, կամ, այլ խոսքով՝ տեղեկատվական սպասարկումը[1]: Ինչպես նշել ենք առաջին ենթաբաժնում, մինչ ռազմական գործողություններ սկսելը ԱՄՆ-ը, օգտագործելով իրաքյան *ՋՈՋ* առասպելը, Ս.Հուսեյնի բռնապետ լինելը և քրդերի դեմ քիմիական զենք կիրառելու իրողությունը, վարում էր արդյունավետ *տեղեկատվական-հոգեբանական պատերազմ*: Նման պատերազմի բոլոր կանոններով վարվող քարոզչության շնորհիվ ձևավորվեց Իրաքի և նրա առաջնորդի *տեղեկատվական կերպարը*, որը մարմնավորում էր իսլամական ահաբեկչությունը և նույնացվում Բեն Լադենի կերպարի հետ [11-13]:

[1] Նկատի ունենք “информационное обеспечение” ռուսերեն եզրը:

Սակայն Իրաքը օկուպացնելուց հետո տեղեկատվական զարգացումներն ընդունեցին այլ, ԱՄՆ-ի համար անցանկալի բնույթ: Ամերիկյան քարոզչության դեմ տեղեկատվական դաշտում գործող հակաթեզերը հետևյալն են.

- Իրաքում *ՋՈՋ* չէր մշակվում: ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի ղեկավարությունը հատուկ մտադրություններով մոլորեցնում էր սեփական երկրի և միջազգային հանրությանը:
- ԱՄՆ ղեկավարության նպատակը ոչ թե Իրաքում ժողովրդավարություն հաստատելն էր, այլ այդ երկրի նավթին տիրապետելը: Որպես այս վարկածի ճյուղավորում շրջանառության մեջ են դրվել նախագահ Բուշի, փոխնախագահ Չեյնիի և ամերիկյան վարչակազմի այլ անդամների Իրաքում ունեցած անձնական շահերի վերաբերյալ նյութեր:
- Իրաքում կոալիցիոն ուժերի և տեղի վարչակարգի դեմ այսօր ընթացող ռազմական գործողությունները ԶԼՄ-ում բնութագրվում են ոչ թե որպես ահաբեկչություն, այլ դիմադրություն «օկուպանտներին»: Իրաքում գործում են ոչ թե ահաբեկիչներ, այլ ապստամբներ, որոնք պայքարում են սեփական երկրի ազատագրման համար: Բաղդադի Աբու Գրեյբ բանտում ամերիկացիների կողմից իրաքցիներին կտտանքների ենթարկելու վերաբերյալ փաստերի հրապարակումը ավելի վատթարացրեց ամերիկյան զինված ուժերի կերպարը՝ զրկելով նրանց «Իրաքի ժողովրդին ազատագրողների» տեղեկատվական կարգավիճակից[1]:

Հարկ է նշել, որ Միացյալ Նահանգների «կերպարի» վատթարացումը վկայում է այն մասին, որ *«պիառային» պատերազմում* ԱՄՆ-ի դեմ հանդես են գալիս զգալի տեղեկատվական ռեսուրսների տիրապետող ուժեր: Այստեղ պետք է կարևորել եվրոպական, ռուսաստանյան և իսլամական աշխարհի ԶԼՄ գործունեությունը, որոնք արտահայտում են իրենց երկրների քաղաքական ղեկավարությունների մոտեցումները: Հակաիրաքյան կոալիցիայի երկրներում ակտիվ էին այն ԶԼՄ-ը, որոնք հանրությանն էին հասցնում քաղաքական ընդդիմության կարծիքը:

Դրա հետևանքով ոչ միայն իսլամական երկրներում, այլև Եվրոպայում, ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում տեղի են ունենում բազմաթիվ ցույցեր՝ ուղղված իրաքյան պատերազմի դեմ: Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերը ստիպված էր ներողություն խնդրել հանրությունից «չհիմնավորված պատերազմ» սանձազերծելու համար: ԱՄՆ վարկն աշխարհում, համաձայն բազմաթիվ հարցումների, այսօր ավելի քան ցածր մակարդակի վրա է: Կարելի է արձանագրել, որ ԱՄՆ-ը տեղեկատվական պատե-

[1] ԱՄՆ նախագահը խոստացավ հողին հավասարեցնել Աբու Գրեյբը և այդպիսով «ջնջել» այդ բանտի մասին հիշողությունները, ինչը պետք է գնահատել որպես տեղեկատվական հակագործողություն:

բազմի ոլորտում խոշոր կորուստներ է կրում և առաջին անգամ վերջին մի քանի տասնամյակում զիջել է առաջատարությունը հանրային կարծիքի ձևավորման խնդրում:

Կոալիցիայի պառակտում: Ի տարբերություն 1991թ. Պարսից ծոցի առաջին պատերազմի, 2003թ. ԱՄՆ-ը լուրջ դժվարություններ ունեցավ հակաիրաքյան կոալիցիայի ձևավորման գործում (տե՛ս, առաջին ենթաբաժին): Անգամ ԱՄՆ մերձավոր դաշնակից Մեծ Բրիտանիան որոշ հարցերում ցուցաբերում է ուրույն մոտեցումներ մերձավորարևելյան խնդիրների և եվրոպական երկրների հետ հարաբերությունների հանդեպ (տե՛ս, օրինակ, [14]): Զարգացումներն Իրաքում հանգեցրին նրան, որ այս կամ այն պատրվակով կոալիցիան լքեցին և իրենց զորամասերը Իրաքից դուրս բերեցին ԱՄՆ գործընկերներ Իսպանիան, Ֆիլիպինները և մի շարք այլ երկրներ: Իրաքը լքելու իրենց մտադրությունների մասին են հայտնել Լեհաստանի, Ուկրաինայի և մի շարք այլ երկրների ղեկավարությունները: Ամերիկացիները փորձում են նրանց փոխարինել նոր դաշնակիցներով՝ առաջարկելով, օրինակ, Ուզբեկստանին $160 մլն և նյութական այլ փոխհատուցումներ [15]:

Իրաքյան Քուրդիստանի վերաբերյալ հայտնի տարաձայնությունները զգալիորեն խարխլեցին ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունները: Քրդական հարցը լարվածություն առաջացրեց նաև Իսրայելի և Թուրքիայի միջև (թուրքերը որպես առիթ օգտագործեցին իսրայելա-պաղեստինյան հակամարտության մի դրվագը) [16,17][1]: Շահերի ընդհանրությունը հակաքրդական և հակաիսրայելական հարցերում սերտացնում է Իրան-Թուրքիա-Սիրիա հարաբերությունները: Կարևոր է ընդգծել նաև Սաուդյան Արաբիայի պահը. ամերիկյան ուղղակի և անուղղակի ճնշումները ստիպեցին այդ երկրի ղեկավարությանը խորհել իր արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացման մասին և անգամ հայատարարել ԱՄՆ-ից իր կապիտալների (մոտ $200 մլրդ) դուրսբերման մասին [18][2]:

Ուժի նոր կենտրոնների և բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորման միտումները: Ներկայիս հակաահաբեկչական պատերազմը հարուցել է գործընթացներ, որոնք այս կամ այն չափով ուղղված են համաշխարհային գործերում ամերիկյան մենատիրության դեմ: 2004թ. ամռանը տեղի ունեցած «Մեծ ութնյակի» և դրան հաջորդած ՆԱՏՕ-ի վեհաժողովները վեր հա-

[1] Տե՛ս նաև http://www.nixoncenter.org/Program%20Briefs/PB%202004/ZeynoIsraelTurkey.pdf
[2] Ստեղծված իրավիճակում որոշ ամերիկյան քաղաքագետներ առաջարկում են մեղմել հարաբերությունները Սաուդյան Արաբիայի հետ: Տե՛ս օրինակ Hume H., «Our Enemy's Enemy», http://www.aei.org/news/newsID.21028,filter.all/news_detail.asp.

նեցին շահերի այն հակասությունները, որոնք օբյեկտիվորեն գոյություն ունեն մի կողմից մայրցամաքային Եվրոպայի, Ռուսաստանի և մյուս կողմից ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի միջև: «Մեծ ութնյակում» գոյություն ունեցող տարաձայնությունները վերաբերում էին Իրաքի հիմնախնդրին. Ֆրանսիայի, Գերմանիայի և Ռուսաստանի ղեկավարները, ինչպես և նախկինում, դեմ արտահայտվեցին իրենց ռազմական ստորաբաժանումները Մերձավոր Արևելք ուղարկելու ամերիկյան ծրագրին: ԱՄՆ ռազմավարությանը ավելի զուսպ, բայց հետևողականորեն դեմ է արտահայտվում Չինաստանը: Այս ամենը որոշ վերլուծաբանների հիմք է տալիս խոսել եվրասիական աշխարհաքաղաքական առանցքների ձևավորման մասին: Գուցեն նման հետևությունը վաղաժամ է, սակայն եվրասիական առաջատար տերությունների միջև հաստատվում են ասոցիատիվ ռազմաքաղաքական կապեր, որոնք ունեն զարգացման բոլոր հեռանկարները:

Շատերը որպես ԱՄՆ հիմնական մրցակից տեսնում են բուռն տնտեսական զարգացում ապրող Չինաստանին[1]: Հաճախ է նշվում 2020թ., երբ համաձայն կանխատեսումների, ՉԺՀ և ԱՄՆ տնտեսական ու ռազմական ոլորտի ցուցանիշները համեմատելի կդառնան: Սակայն առանձնապես պետք է կարևորել չինական գաղափարախոսական համակարգը, որը երբեմն անվանում են «կարմիր կոնֆուցիոնիզմ»: Չինական ավանդական արժեքային համակարգը, չնայած տնտեսական ոլորտում շուկայական մեխանիզմների լայն ներդրմանը, առայժմ չի ենթարկվում ազատական գաղափարների ազդեցությանը:

ԱՄՆ մենատիրական քաղաքականությանը լուրջ մարտահրավեր է նաև Եվրամիության (որին երբեմն անվանում են «կորպորատիվ կայսրություն») ընդլայնումը և հզորացումը: Մոտ 450 մլն բնակչություն և $10 տրիլիոնին հասնող համախառն ներքին արտադրանք (ՀՆԱ) ունեցող ԵՄ-ն իր տնտեսական ցուցանիշներով ընդհուպ մոտեցել է ԱՄՆ-ին, իսկ եվրոն հաջողակ մրցակցում է դոլարի հետ: Ընթացքի մեջ է եվրոպական ԶՈՒ ձևավորումը, ինչը կարող է արժեզրկել Հյուսիսատլանտյան դաշինքի դերը և նշանակությունը (տե՛ս, օրինակ, [19]):

ԱՄՆ-ԵՄ հակասությունները ներառում են նաև քաղաքակրթական ոլորտը: Այսօր ընթանում է միասնական արևմտյան քաղաքակրթության ամերիկյան և եվրոպական մասերի տրոհում: Հանթինգտոնի կողմից ձևակերպված «միացյալ արևմտյան քաղաքակրթություն» հասկացությունն արդեն չի համապատասխանում իրականությանը: Քաղաքակրթական հարթությունում պետք է դիտարկել նաև Եվրոպա-Իսրայել հակասությունների խորացումը: Հատկանշական է, որ ամերիկյան «նեոկոնները», մահմե-

[1] Տե՛ս, օրինակ, “ Китай 2003”, Пекин, Изд-во Синьсин, 2003.

դական որոշ երկրների և Հյուսիսային Կորեայի կողքին, ԱՄՆ թշնամիների թվին են դասում նաև Ֆրանսիային [20]:

Բնականորեն, մայրցամաքային եվրոպական տերությունների գործողությունները հանդիպում են ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի հակազդեցության՝ ուղղված առաջին հերթին Ֆրանսիայի և Գերմանիայի շուրջ հետագա եվրաինտեգրման գործընթացների դեմ: Սակայն թվում է, թե Ֆրանսիայի նախկին արտգործնախարար Յուբեր Վեդրինի խոսքերը այն մասին, թե «Եվրոպան պետք է ստեղծի հակակշիռ ԱՄՆ գերակայությանը բազմաբևեռ աշխարհում», հեռու չեն իրականություն դառնալուց:

Ուժի նոր կենտրոնների ձևավորման տեսանկյունից կարևոր դերակատարում ունի Ռուսաստանը: Նշենք, որ վերլուծական հանրության մի մասը, թերևս տպավորված ԽՍՀՄ փլուզման և 90-ական թվականների Ռուսաստանի պետականության աննախադեպ անկման փաստից, աշխարհաքաղաքական հաշվարկներում անտեսում է այդ տերության հնարավորությունները: Մինչդեռ Ռուսաստանը վերջին տարիներին բարելավում է իր տնտեսական իրավիճակը և դանդաղ, բայց հետևողականորեն վերականգնում իր քաղաքական դիրքերը [21, էջ 19]:

Քաղաքական համերաշխությունն Իրաքի հարցում, փաստորեն, խթանեց Ռուսաստանի, Ֆրանսիայի և Գերմանիայի միջև միջպետական կապերի ամրապնդումը: Դրանով պետք է բացատրել այն փաստը, որ այսօր Ռուսաստանը սակավ հիվանդագին է ընկալում ԵՄ և ՆԱՏՕ առաջխաղացումը դեպի Արևելք: Միևնույն ժամանակ Ռուսաստանը, կիրառելով զանազան քաղաքական և տնտեսական ձևաչափեր (Կոլեկտիվ անվտանգության պայմանագրի կազմակերպություն, Եվրազես և Միացյալ տնտեսական տարածք), փորձում է ինտեգրել իր շուրջը ԱՊՀ երկրներին: Ամրապնդվում են կապերը նաև Չինաստանի հետ, և այստեղ պետք է կարևորել «Շանհայի համագործակցության կազմակերպությունը», որի ազդեցությունն աճի միտումներ ունի: Տիրապետելով հզոր միջուկային զենքին և ռազմական տեխնոլոգիաներին, ի տարբերություն եվրոպական տերությունների՝ ունենալով լայն աշխարհաքաղաքական տարածքներում քաղաքականություն վարելու կայսերական փորձ, Ռուսաստանը նախկինի պես մնում է ԱՄՆ հիմնական մրցակիցը Եվրասիայում [22, էջ 7]:

Իրաքյան ճգնաժամի հետևանքով ուժի կենտրոնների ձևավորման տեսանկյունից և մերձավորարևելյան տարածաշրջանում կատարվող զարգացումների համատեքստում անհրաժեշտ է կարևորել Իրանի գործոնը: Համաձայն որոշ տվյալների, այդ երկիրը Իրաքում շիաների հակաամերիկյան շարժումը կազմակերպելու համար ծախսում է ամսական մինչև $60-70 մլն: Հաշվի առնելով այն ազդեցությունը, որը իրաքյան պատերազմի

հետևանքով ձեռք է բերել Իրանը տարածաշրջանում, որոշ մեկնաբաններ անգամ ծայրահեղական կարծիք են հայտնում, թե իրաքյան պատերազմն ամենից շատ ձեռնտու էր Իրանին[1]: Ուշադրության արժանի է նաև այն, որ եթե Իրանը նախկինում գործում էր փոքր-ինչ մեկուսացված, ապա այսօր նրա տնտեսական հարաբերությունները ԵՄ-ի և Ռուսաստանի հետ ավելի դինամիկ են զարգանում:

Ամփոփելով վերը ներկայացվածը՝ կարելի է փաստել, որ իրաքյան պատերազմը խթանել է ուժի և քաղաքական կամքի կենտրոնների ձևավորման գործընթացը: Այդ կենտրոններից յուրաքանչյուրն առանձին այսօր ի զորու չէ դիմագրավել ԱՄՆ–ին: Սակայն նրանց համաձայնեցված գործողությունները լրջորեն խոչընդոտում են ԱՄՆ ռազմավարությանը: Եվրասիական տարածքում կարելի է արձանագրել ռազմաքաղաքական և տնտեսական նոր ձևաչափերի առաջացում, որոնք դուրս են ամերիկյան վերահսկողությունից: Այս ամենը կարելի դիտարկել որպես միտում բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորման ուղղությամբ [23, 24]:

3. ԱՄՆ ռազմաքաղաքական գերակայությունը

ԱՄՆ-ը ներկայում կուտակել է վիթխարի ռազմաքաղաքական և տնտեսական ներուժ, ինչն ամերիկյան ստրատեգներին թույլ է տալիս մտածել մենատեր առաջատարի և միաբևեռ աշխարհակարգի եզրերով: Միացյալ Նահանգների առաջատարությունն այսօր առաջին հերթին վերաբերում է ռազմական ոլորտին, ինչը դրդում է առավել հաճախ, քան նախկինում, քաղաքական խնդիրները լուծելիս օգտագործել ուժային լծակները:

Համաձայն Ստոկհոլմի «Խաղաղության ուսումնասիրման միջազգային ինստիտուտի» տվյալների՝ 2003թ. ԱՄՆ բաժինը աշխարհի բոլոր ռազմական ծախսերում կազմել է 45-50%: Արդեն 2005թ. այդ տերությունը ենթադրում է ռազմական կարիքների համար ծախսել $417,5 մլրդ[2]: Ներկայում ԱՄՆ զինված ուժերի թվաքանակը կազմում է, համաձայն տարբեր աղբյուրների, 1,3 –1,5մլն, որոնցից մոտ 255 հազարը ծառայում են ԱՄՆ-ից դուրս[3]: Պենտագոնի 2003թ. հաշվետվության համաձայն, ԱՄՆ-ը 702 ռազմակայան և հենակետ ունի մոտ 130 երկրներում (տե՛ս, օրինակ, [25]):

Ջորջ Բուշի նախագահության օրոք սկսվեցին ԱՄՆ ազգային անվտանգության համակարգի սկզբունքային բարեփոխումները: Գերկենտրոնացվում է հատուկ ծառայությունների համակարգը, փոխվում է ամերիկյան ԶՈՒ հայեցակարգը (տե՛ս, օրինակ, [26-28]): Մշակվել և գործնական

[1] Իրանի միջուկային ծրագրի և ԱՄՆ-Իսրայել-Իրան հարաբերությունների հնարավոր զարգացումների վերաբերյալ տե ս վերջին ենթաբաժնում:
[2] http://www.inosmi.ru/translation/211518.html
[3] OPEC.RU, 11.05.2004

կիրառություն է գտնում բանակում շարժունակ, մոդուլային կառուցվածք և ինքնավար գործողությունների լայն հնարավորություն ունեցող զորամասերի ձևավորման հայեցակարգը: Անհրաժեշտ է հատուկ ընդգծել հակահրթիռային պաշտպանության նոր համակարգը, որը կոչված է պաշտպանելու ոչ միայն ԱՄՆ տարածքը, այլ նաև Արևմտյան Եվրոպան, Արևելյան Ասիան և, ինչը բնորոշ է, Պարսից ծոցը: *Մշակվում է «ասիմետրիկ (տվյալ պարագայում հակառակորդի գործողությունների հետ և սեփական պատասխանի միջև համեմատության կամ ընդհանուր հիմքի բացակայություն)–իդիոսինկրիտիկ (ենթադրում է ոչ ստանդարտ մեթոդների կիրառում) պատերազմների հայեցակարգը:* Առանձնահատուկ կարևորություն է տրվում ռազմական գործում *տեղեկատվական տեխնոլոգիաներին, տեղեկատվական, տեղեկատվական-կենսաբանական և տեղեկատվական–ժողովրդագրական (դեմոգրաֆիական) պատերազմներին* վերաբերող մշակումներին (տե՛ս, օրինակ, [12, 13, 29, 30]): Այս ոլորտում նորույթ է ԱՄՆ փոխծովակալ Արթուր Սեբրովսկու և Ջոն Հարստկայի կողմից մշակված *«Ցանցակենտրոնային»* պատերազմի հայեցակարգը, որտեղ ուշադրություն հրավիրելով ցանցային կառույցների արդյունավետության հանգամանքին՝ կարևորվում է ոչ այնքան ձեռք բերվող տեղեկատվության քանակը, որքան փոփոխություններին համապատասխան արձագանքելու, ընդհանուր իրավիճակն ավելի խոր ընկալելու, բազմակողմանի գիտակցելու և գնահատելու կարողությունը:

Միացյալ Նահանգների ռազմական և տնտեսական հզորության հիմքում ընկած է մտավոր ներուժը: Այդ տերությունը, ունենալով մոլորակի բնակչության մոտ 5%-ը, իրականացնում է ընդհանուր ինովացիոն գործունեության 52%-ը: Միայն գիտահետազոտական փորձարարական կոնստրուկտորային մշակումների (*НИОКР*) վրա ԱՄՆ-ը 2001թ. ծախսել է $282 մլրդ (երկրորդ տեղը գրավող Ճապոնիայի ցուցանիշն է $103 մլրդ.)[1]: Ամերիկյան մտավոր ներուժի մասն են կազմում բազմաթիվ «ուղեղային կենտրոնները», որոնց մշակումները կոչված են ապահովելու ԱՄՆ առաջատարությունը: Հաճախ ամերիկյան քաղաքական առավելությունը պայմանավորված է ոչ այնքան տնտեսական կամ ռազմական գերազանցությամբ, որքան անհրաժեշտ տեղեկատվություն, իմացություն և գիտելիքներ, ինչպես նաև գործնականում դրանց կիրառման տեխնոլոգիաներն ունենալու հանգամանքով: Թերևս նման մշակումների արդյունք է ԱՄՆ 21-րդ դարի ռազմավարության փիլիսոփայությունը արտահայտող *«գերկանխարգելիչ (հիպերպրեվենտիվ)» դոկտրինան*:

[1] Տե՛ս, OPEC.RU, 11.05.2004. «Эксперт», 2003, #41, с.7. Նշենք, որ ինովացիոն ոլորտում վերջին տարիներին նկատվում է ԱՄՆ-ի կողմից առաջատարությունը զիջելու միտում:

«Գերկանխարգելիչ դոկտրինա»: Այս մոտեցման տրամաբանությունն այն է, որ ԱՄՆ-ը պետք է նախահարձակ քայլեր կատարի ոչ միայն այն երկրների կամ ահաբեկչական կազմակերպությունների նկատմամբ, որոնք արդեն ունեն, օրինակ, ՋՈՋ և կարող են դա օգտագործել ԱՄՆ-ի դեմ, այլ նաև այն երկրների նկատմամբ, որոնք *տեսականորեն կարող են ապագայում մշակել ՋՈՋ* և այն *տեսականորեն կիրառել ԱՄՆ-ի դեմ*: Նման մոտեցումը վերաբերվում է ոչ միայն *ՋՈՋ*-ին, այլև այն տարաբնույթ պոտենցիալ մարտահրավերներին, որոնք կարող են սպառնալ ԱՄՆ անվտանգությանը ռազմական, քաղաքական, տնտեսական, տեղեկատվական և այլ ոլորտներում [31-33]: Որոշ մեկնաբաններ գերկանխարգելիչ ռազմավարության պատմական արմատները տեսնում են ավետարանական Հերովդեսի «մանուկների ջարդի» նախադեպում [31]:

ԱՄՆ մերձավորարևելյան ռազմավարությունը կարելի է դիտարկել որպես գերկանխարգելիչ դոկտրինայի կիրառման օրինակ: Իրաքը, չունենալով *ՋՈՋ*, զուցեև ապագայում *կարող էր* այն մշակել և օգտագործել եթե ոչ ԱՄՆ-ի, ապա նրա դաշնակցի՝ Իսրայելի դեմ: Այդ համատեքստում Իրաքի դեմ պատերազմ սկսելու քարոզչական վարկածը կարելի է դիտարկել որպես տեղեկատվական միջոցներով գերկանխարգելիչ դոկտրինայի փորձարկում:

Սակայն «ապագան շտկող» գործողություններին բնորոշ է «բումերանգի էֆեկտը», քանի որ դրանք վաղօրոք հարուցում են միջազգային հանրության դիմադրությունը՝ ապագայում ԱՄՆ-ի համար անբարենպաստ զարգացումներ առաջացնելով *(տե՛ս, նախորդ ենթաբաժինը)*: Նման դինամիկ մրցակցության տրամաբանությունը պահանջում ԱՄՆ-ից հատուկ ուշադրություն դարձնել քաղաքական հայեցակարգերի և տեխնոլոգիաների մշակման վրա:

Անգլոսաքսոնների միություն: Համընդհանուր «թշնամական շրջապատի» թեզի գաղափարախոսները գտնում են, որ ԱՄՆ միակ հուսալի դաշնակից կարող են հանդիսանալ անգլիախոս ժողովուրդները [34, p. 65], [35]: Անգլոսաքսոնների միության կողմնակիցները համոզված են, որ միայն անգլիախոս ժողովուրդներն են (թվով մոտ 350մլն., ևս 450մլն. անգլերենը համարում են իրենց երկրորդ լեզուն) պատկանում այն քաղաքակրթությանը, որը, համաձայն քաղաքագետ Ռ. Կոնկվիստի արտահայտության, հանդիսանում է «անարխիզմի և դեսպոտիզմի միջինը»: Համարվում է, որ այդ ժողովուրդներն են, որ ունեն քաղաքակրթական-մշակութային և հոգեկերտվածքային ընդհանրություն, որը ենթակա չէ ժամանակի ազդեցությանը: Նման դաշնակիցների շարքում ակնհայտորեն առաջնային տեղում

է Միացյալ Թագավորությունը: Անգլիախոս երկրների թվին են պատկանում Կանադան, Ավստրալիան, Նոր Զելանդիան, Իռլանդիան, Խաղաղ օվկիանոսի և Կարիբյան ծովի մի քանի կղզի-պետություններ:

Նշենք, որ անգլիախոս ժողովուրդների դաշինքի գաղափարական ջատագովներից էր Ուինստոն Չերչիլը: Անգլիախոս երկրների ռազմաքաղաքական համագործակցությունը լավագույնս արտահայտվեց Առաջին և Երկրորդ համաշխարհայինի տարիներին:1 Սառը պատերազմի օրոք ձևավորված գլոբալ ռադիոէլեկտրոնային հետախուզության «Էշելոն» համակարգի մասնակիցները նույնպես անգլոսաքսոններն են՝ ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Կանադան, Ավստրալիան, Նոր Զելանդիան, բայց ոչ ՆԱՏՕ-ի անդամ եվրոպական երկրները [36]: Բնորոշ է, որ ԱՄՆ-ի կողմից վերջերս հայտարարված հակահրթիռային նոր համակարգը նույնպես հիմնականում ներգրավում է անգլիախոս երկրներին:

Բեռնարդ Լյուիսի հայեցակարգը: Դեռ 1999թ. AEI-ի զեկույցում *(տե՛ս, առաջին ենթաբաժին)* հատուկ ուշադրության էին արժանացել Մերձավոր Արևելքում տիրող միջէթնիկ և միջդավանանքային հարաբերությունները: Ըստ վերլուծաբանների՝ դրանք ներքաղաքական գործընթացների «հավերժական շարժիչ» են: Միջէթնիկ և միջդավանական հակասությունների օգտագործումը պետք է էապես օգներ ԱՄՆ-ին իր առջև դրված խնդիրների լուծման հարցում: Հատկապես ընդգծվում էր Իրաքի «քրդական գործոնը»: Քրդերը, ինչպես հայտնի է, կազմում են Իրաքի բնակչության մոտ 20%-ը և նախկինում պայքարել են Սադամ Հուսեյնի վարչակարգի դեմ:

«Հավերժական շարժիչի» օգտագործումն ավանդական քաղաքական տեխնոլոգիա է, որն իր արտահայտությունն է գտել դեռևս հռոմեական *«Բաժանիր, որ տիրես»* ասացվածքում: Սակայն այդ մոտեցումը գիտականորեն մշակել է ամերիկյան արևելագետ Բեռնարդ Լյուիսը, որը Ս. Հանթինգտոնի հետ միասին համարվում է «քաղաքակրթությունների բախման» տեսության համահեղինակը [37, 38]: Համաձայն արևելագետի, մահմեդական աշխարհի գրեթե բոլոր երկրների գլխավոր խնդիրը նրանց էթնիկ և դավանական բազմազանությունն է: Այն լուծելու համար, մասնավորապես, Իրաքը պետք է մասնատել սունիական, շիական և քրդական հատվածների, ինչն էապես «կհանդարտեցնի» այդ երկիրը:

Ներկայում Բ.Լյուիսի մոտեցումը գործնականում կիրառվում է Իրաքում: Չնայած թուրքական կողմի դիմադրությանը, քրդերը օգտվում են ԱՄՆ և Իսրայելի աջակցությունից (որոնք միաժամանակ ձգտում են այդ ժողովրդին պահել վերահսկողության տակ) և ձեռք են բերել կիսանկախ կարգավիճակ: Սակայն Իրաքի շիական հատվածում այսօր առավել մեծ է

Իրանի ազդեցությունը: Ավելին, ԱՄՆ ընդդիմադիր որոշ շիա և սունի առաջնորդներ հայտարարել են իրենց համերաշխության վերաբերյալ: Այս վերջին հանգամանքը չի համընկնում ամերիկյան նախնական ծրագրերի հետ:

Հարկ է նշել, որ ԱՄՆ ղեկավարության քաղաքական փիլիսոփայությունը հենված է միաբևեռ աշխարհակարգի հայեցակարգի վրա և բացասական է վերաբերվում «ազգային պետություն» հասկացությանը: Մասնավորապես ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության գծով խորհրդական Քոնդոլիզա Ռայսը ազգային պետությունների «վեստֆալյան» համակարգը բնորոշեց որպես «սատանայական» *(տե՛ս նաև Վերջաբանը)*: Սակայն դա չի հակասում Բ.Լյուիսի տեսությանը, քանի որ ոչ մեծ, հետևաբար՝ թույլ, ազգային կազմավորումների ղեկավարումը մեկ կենտրոնից միաբևեռ համակարգում ավելի դյուրին է:

Աջակցիր երկրորդին: Այս ավանդական հայեցակարգի էությունն այն է, որ ամեն մի տարածաշրջանում ԱՄՆ պետք է աջակցի իր նշանակությամբ և հզորությամբ երկրորդ տերությանը՝ արգելակելով տարածաշրջանային առաջատարների ձևավորումը [34, 39, 40]: Գործնականում դա նշանակում է, որ ԱՄՆ-ը պետք է դաշնակցի Մեծ Բրիտանիայի հետ ԵՄ-ի դեմ, Արևելյան Եվրոպայում՝ Ուկրաինայի հետ ընդդեմ Ռուսաստանի և այլն:

Այդ համատեքստում նկատենք, որ այսօր ԱՄՆ մերձավորարևելյան ռազմավարությունը խիստ կապված է Իսրայելի հետ և ԱՄՆ-ը փաստորեն զրկվել է Սաուդյան Արաբիայի և Իրանի նկատմամբ «աջակցիր երկրորդին» քաղաքականություն վարելու հնարավորությունից: Միևնույն ժամանակ այդ հայեցակարգը ԱՄՆ-ը բավական արդյունավետ կիրառում է Եվրասիայում: Փաստ է, որ այսօր Միացյալ Նահանգներն ավելի զարգացած հարաբերություններ է կառուցել Ռուսաստանի, Չինաստանի, Ճապոնիայի, Հարավային Կորեայի հետ, քան դա նրանք կարողացել են անել միմյանց միջև: Սակայն այդ հարթությունում իրադրությունն այսօր փոխվելու միտումներ է ցուցաբերում:

4. ԱՄՆ «նահանջի» վերաբերյալ սցենարները

Տեղեկատվական դաշտում կարելի է հանդիպել հղումների ԱՄՆ նախկին պաշտպանության նախարար Ռոբերտ Մաքնամարայի հուշերին, որոնցում նա բացասական գնահատական է տալիս վիետնամյան պատերազմին [41]: Հաճախակի են դարձել պնդումները, թե ԱՄՆ Իրաքում խոշոր պարտություն է կրում, և քննարկվում են դրանից բխող հետևանքները [42]: Այդ տրամադրությունները առիթ են ծառայում քաղաքագետների և

վերլուծաբանների համար, որպեսզի նրանք փորձեն կանխատեսել ԱՄՆ՝ որպես գերտերության, ապագան: Համաձայն մի մոտեցման, ԱՄՆ ռազմաքաղաքական ներուժը բավարար է, որպեսզի այդ գերտերությունը, կիրառելով, օրինակ, նախորդ ենթաբաժնում ներկայացված տեխնոլոգիաները, դեռ երկար պահպանի իր մենատիրական առաջատարությունը: Հակառակ դրան, որոշ վերլուծաբաններ գտնում են, թե ԱՄՆ-ը արդեն հասել է հզորության բարձրակետին և արդեն մոտ ապագայում պետք է «նահանջի»՝ զիջելով իր առաջատարությունը: Տարբեր վերլուծաբաններ այդ նահանջը պատկերացնում են կամ «փափուկ», կամ էլ «կոշտ» սցենարների տեսքով:

«Բարոյականության անկման» թեզը: Համաձայն մի տեսակետի, ԽՍՀՄ փլուզման հիմնապատճառն արժեքային համակարգի խարխլման և բարոյականության անկման մեջ է: Այդ մոտեցումը, ըստ նորվեգացի քաղաքագետ Յոհան Գալտունգի, հիմնավորված է նաև ԱՄՆ պարագայում [43]: Քաղաքագետի թեզը հետևյալն է. ԱՄՆ-ը վերածվել է կայսրության, իսկ կայսրությունները ենթակա են փլուզման, քանի որ կառավարման նման ձևը հանգեցնում է ներքին անլուծելի հակասությունների առաջացման: Որպես հիմնական հակասություններ՝ Գալտունգը նշում է ԱՄՆ-ում բարոյականության անկումը, ժողովրդավարական սկզբունքների և ԱՄՆ հարձակողական արտաքին քաղաքականության միջև ծագած անհամաձայնությունները:

Նկատենք, որ բարոյական բաղադրիչը, որքան էլ փորձ արվի այն դուրս մղել քաղաքագիտական հասկացություններից և բառապաշարից, խիստ կարևոր է իրադրության ադեկվատ գնահատման և կանխատեսումներ կատարելու տեսանկյունից: Գալտունգի մոտեցումները համընկնում են ականավոր փիլիսոփա-քաղաքագետ Ալեքսանդր Պանարինի տեսակետներին (տե՛ս, օրինակ, [44]):

Համաձայն մի շարք վկայությունների, այսօր Իրաքում տեղի է ունենում երկուստեք բարոյալքում. ոչ միայն ամերիկյան բանակն է ցուցաբերում անիմաստ դաժանության օրինակներ, այլև Իրաքի բնակչության որոշ խավեր լյումպենացվում են, իսկ երկրում արձանագրվում են քաղաքակրթական դեգրադացիայի տարրեր (տե՛ս, օրինակ, [45, c. 19]): Նկատենք, որ նման երևույթներ առկա են ոչ միայն Իրաքում, այլև, օրինակ՝ Աֆղանստանում: Ինչպես նշում է այս կապակցությամբ *The Guardian*-ի մեկնաբանը. «Աբու Գրեյբի «մասնագետները» ապագա կոպիտ և դաժան գերտերության առաջին ծիծեռնակներն են» [42]:

Ըստ Գալտունգի, այսօրվա Բաղդադը «Բուշի Ստալինգրադն» է, և նախագահ Բուշը իր գործողություններով արագացնում է ամերիկյան կայ-

սրության փլուզումը: Որպես ԱՄՆ-ի կողմից իր առաջատիրության զիջման հնարավոր ժամկետ մատնանշվում է 2020թ.: Կայսրության անկումն ընթանալու է «փափուկ» սցենարով: Գործընթացը հանգելու է նրան, որ ամերիկացիները դուրս են բերելու իրենց զինուժը արտերկրում տեղաբաշխված ռազմակայաններից և դադարելու են վարել գլոբալ արտաքին քաղաքականություն: Այդ ամենի հետևանքով ԱՄՆ տնտեսությունն անգամ կարող է շահել, ինչպես դա տեղի ունեցավ Մեծ Բրիտանիայում անցյալ դարի 50-ականներին, երբ այն հրաժարվեց գաղութներից և դադարեց լինել դասական կայսրություն[1]:

Սամյուել Հանթինգտոնի «ժողովրդագրական» փլուզման սցենարը: Ինչպես հայտնի է, ԽՍՀՄ կազմալուծման հիմնական պատճառներից մեկը ազգային հարցի ոչ բարվոք վիճակն էր: Համակարգային առաջին իսկ երերումները վեր հանեցին այն բազմաթիվ հիմնախնդիրները, որոնք կուտակվել էին «ինքնավարություն»-«հանրապետություն», «հանրապետություն»-«կենտրոն» հարաբերություններում:

Միացյալ Նահանգների պետական կառուցվածքը, ի տարբերություն ԽՍՀՄ-ի, ունիտար է: Սակայն բազմազգ ԱՄՆ-ը կորցրել է «ժողովուրդների ձուլման կաթսայի» իր նախկին դերը: Ազգային կենտրոնախույս ուժերի ձևավորումը խթանում են նաև ժողովրդագրական միտումները: Համաձայն Սամյուել Հանթինգտոնի, այս զարգացումները հանգեցնելու են ԱՄՆ մասնատմանը և փլուզմանը, այսինքն՝ զարգացումները ապագայում կրելու են «կոշտ» բնույթ [46]:

Խնդրի էությունը հետևյալն է. համաձայն 2004թ. ԱՄՆ պաշտոնական վիճակագրության տվյալների, 2050թ. ԱՄՆ բնակչության 50%-ը կազմելու են իսպանախոս «լատինոսները» (այսօր արդեն վերջիններիս թվաքանակը պաշտոնապես կազմում է նվազագույնը 23 մլն, իսկ «լատինոսներից» շատերը դուրս են վիճակագրության ոլորտից): Նրանք, ինչպես նաև սևամորթները, որոշ նահանգներում կազմելու են մեծամասնություն, ձգտելու են դուրս գալ ԱՄՆ կազմից և ստեղծել իրենց սեփական պետությունը:

Միխայիլ Դելյագինի «գլոբալ տնտեսական ճգնաժամի» սցենարը: Որպես ԽՍՀՄ փլուզման պատճառներից մեկը մատնանշվում էր նրա չափազանց «կարծր» պլանային տնտեսական համակարգը: Միևնույն ժամանակ, տնտեսագետների մի ստվար հատված գտնում է, որ կատարյալ չէ նաև տնտեսության ազատական մոդելը: Այդ մոդելին բնորոշ «գերճկունու-

[1] Այս ամենի առիթով նկատենք, որ նախորդ դարի 50–ականներին բրիտանական կայսրության անկումը կարելի է դիտարկել որպես «փոխակերպում», որից հետո անգլիախոս ժողովուրդների կայսրության «պարտականությունները» անցան ԱՄՆ-ին:

թյունը» կարող է հանգեցնել ոչ միայն լոկալ, այլև գլոբալ ճգնաժամերի:

Տնտեսագետ Մ.Դելյագինի մոտեցման համաձայն, 2020թ. նախաշեմին ԱՄՆ-ին համակելու է խոր տնտեսական ճգնաժամ [47]: Այն պայմանավորված է լինելու «արտադրական» կապիտալի համեմատ՝ բորսայական գործարքների հետևանքով գոյացած «սպեկուլյատիվ» կապիտալի մասնաբաժնի մեծացմամբ[1]: Արդեն այսօր «սպեկուլյատիվ» կապիտալը գնահատվում է որպես համընդհանուրի 60-70%, և այս ցուցանիշն աճելու միտում ունի: Հաշվի առնելով, որ ԱՄՆ-ին է պատկանում համաշխարհային ՀՆԱ մոտ 25%-ը և որ նրա տնտեսության հետ այս կամ այն չափով կապված են աշխարհի մյուս երկրները, տնտեսական ճգնաժամը ԱՄՆ-ում գլոբալ հետևանքներ է ունենալու: Արդյունքում՝ ԱՄՆ-ը ոչ միայն կորցնելու է իր առաջատար դիրքը. համաձայն Դելյագինի, այդ երկրում տեղի են ունենալու համակարգային փոփոխություններ անկանխատեսելի հետևանքներով:

Վերջաբան

ԱՄՆ-ի համար բացասական սցենարները հիմնված են հնարավոր տնտեսական կամ ժողովրդագրական գործընթացների վրա. հասնելով որոշակի կրիտիկական սահմանի՝ դրանք հանգեցնում են դժվար վերահսկելի իրավիճակների: Միևնույն ժամանակ, տնտեսական և ժողովրդագրական զարգացումները ենթարկվում են օբյեկտիվ օրինաչափությունների: Դա թույլ է տալիս ինչ որ ճշգրտությամբ կատարել կարճաժամկետ կամ երկարաժամկետ կանխատեսումներ և հարկ եղած պարագայում ու հնարավորությունների սահմաններում միջամտել անցանկալի գործընթացներին:

Անհամեմատ բարդ է կատարել կանխատեսումներ քաղաքականության ոլորտում, որտեղ հաճախ որոշիչ նշանակություն ունեն գաղափարախոսական և այլ բնույթի իռացիոնալ գործոնները: Հատկանշական է, որ ԱՄՆ Ազգային հետախուզական խորհրդի կանխատեսումները սոցիալական և տնտեսական բնագավառում բավական հստակ են, բայց անորոշ՝ քաղաքական զարգացումների պարագայում: Ինչպես տեսնում ենք ներկայացված նյութերից, անգամ «պրագմատիկ կառավարությունները» հաճախ գործում են տիրող իրադրությանը ոչ այնքան ադեկվատ և ընդունում են իռացիոնալ որոշումներ: Այս ամենին զուգահեռ որոշ հետազոտողներ հակված են այն թեզին, որ ժամանակակից հասարակական-քաղաքական գործընթացները բնութագրվում են այլ, ոչ ավանդական հասկացություններով և եզրաբանությամբ: Այդ նոր քաղաքական տրամաբանության հիմքում

[1] ԱՄՆ տնտեսության զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ տե՛ս, օրինակ՝ Иноземцев В., «Глобализация по-американски как альтернатива вестернизации», Космополис #4(6), зима 2003/2004.

դրված են արագ փոփոխվող, *քաոտիկ և ոչ ստացիոնար գործընթացները*, որոնց կառավարելիության կամ անկառավարելիության խնդիրները միանշանակ լուծումներ չեն պարունակում [48], [49, c. 123]:

Վերոհիշյալի համատեքստում առանձնահատուկ ուշադրության է արժանի նախագահ Բուշի ելույթներից մեկը, երբ նա, լավատեսորեն բնութագրելով իրադրությունը Իրաքում, հայտարարեց, թե առաջխաղացումն այդ երկրում կարող է թվալ *«քաոտիկ»:* Դա կարելի է մեկնաբանել որպես տվյալ ելույթի համար մշակված մի եզր, որը գուցեն արտահայտում է ներկայում կիրառվող ռազմավարության էությունը: Այդպիսով Իրաքում ստեղծված անվերահսկելի իրավիճակը կարելի է ընկալել ոչ թե արտառոց, այլ բնականոն երևույթ: Հետևելով նման տրամաբանությանը՝ ԱՄՆ ղեկավարությունը գուցեն իրոք դրական է գնահատում Իրաքում ստեղծված *քաոտիկ* իրադրությունը: Կարելի է նաև ենթադրել, թե հատուկ դեպքերում քաոտիկ իրավիճակին ձգտելը գերկանխարգելիչ դոկտրինայի մասն է կազմում. այդպիսով փորձ է կատարվում խուսափել օրինաչափ զարգացումներից ապագայում:

Իրաքում ստեղծված *քաոսը* կարելի է, թերևս, նմանեցնել բորսայում կատարվող գործընթացներին, որոնք խիստ զգայուն են արագ փոփոխվող իրադրության նկատմամբ և դիտորդին կարող են անկանոն և անկանխատեսելի թվալ: Միայն բարձրակարգ բրոքերներն են, որ ի զորու են ադեկվատ գնահատել այդ թվում է թե քաոտիկ իրավիճակը և շահել: Ի դեպ, 2003թ. Պենտագոնի մասնագետները փորձում էին ստեղծել մի յուրահատուկ բորսա, որտեղ կխաղարկվեին քաղաքական և տնտեսական գործընթացները (ներառելով ահաբեկչությունները և ֆորսմաժորային իրադրությունները) Մերձավոր Արևելքում:

Այլ խոսքով՝ ավանդական մոտեցումների պարագայում գուցեն գործերի անցանկալի ընթացքը թելադրեր ԱՄՆ-ին հարմար պահին նահանջել Իրաքից, ինչպես որ դա տեղի ունեցավ Վիետնամում: Սակայն «կառավարվող քաոսի» հայեցակարգը և իռացիոնալ մոտեցումները կարող են հանգեցնել այլ լուծումների: Ավելացնենք, որ ռազմական գործողությունների բնույթը Իրաքում այնպիսին է, որ չի կարող սպառնալ ԱՄՆ-ին անմիջական ռազմական պարտությունով, ինչպես դա եղավ Վիետնամում. ամերիկյան բանակը կարող է իրեն թույլ տալ տարեկան կրել, օրինակ, 1-2 հազար մարդու կորուստ: Հանրային կարծիքի կառավարման տեխնոլոգիաները և «անցանկալի» տեղեկատվության արտահոսքի դեմ կիրառվող միջոցները նվազագույնի են հասցնում նաև մարդկային կորուստների հանդեպ հասարակության բացասական արձագանքները: Նկատենք նաև, որ իրաքյան շարունակական *փոքր ինտենսիվության* պատերազմը բովանդակային նմա-

նություններ ունի պաղեստինա-իսրայելական հակամարտության հետ, որն արդեն երկար պատմություն ունի:

Նման տրամաբանության գերակայության պարագայում ԱՄՆ-ը կարող է շարունակել մերձավորարևելյան էքսպանսիան: 2003թ. ամռանը-աշնանը հրատապ էր թվում Իրանի վարչակարգի տապալման խնդիրը, բայց կարծես թե հետագա զարգացումներն այն դուրս մղեցին օրակարգից [50]: Սակայն ներկայում այդ մտադրությունները, թերևս, վերականգնման միտումներ են ցուցաբերում [51]: Միևնույն ժամանակ, իրանյան համատեքստում *քաոտիկ* զարգացումները, հաշվի առնելով Իրանի միջուկային ծրագիրը և ԱՄՆ՝ այդ երկրի ատոմային օբյեկտները ռմբակոծելու մասին հայտարարությունները, կարող են և հանգեցնել միջուկային աղետի: Դա կունենա գլոբալ հետևանքներ և կհանգեցնի արդեն *«անկառավարելի քաոսի»*: Ավելացնենք, որ Իրանի նկատմամբ անգամ «փափուկ» պատժամիջոցների կիրառումը, համաձայն վերլուծաբանների, կարող է բարձրացնել նավթի արդեն իսկ էապես աճած գները մինչև $80, ինչը նույնպես կարելի է որակել որպես նվազագույնը դժվար կառավարելի իրավիճակ:

Այսօր վերլուծաբանական հանրությունը հաճախ է անդրադառնում 1648թ. Վեստֆալյան պայմանագրին, որի արդյունքում Եվրոպայում ձևավորվեցին ազգային պետությունները և նրանց միջև հարաբերությունները կարգավորող միջազգային իրավունքի համակարգը *(տե՛ս նաև 3-րդ ենթաբաժին)*: Պատմաբաններից ոմանք «մինչվեստֆալյան աշխարհը» բնութագրում են որպես *«քաոտիկ»*: Տպավորությունն այնպիսինն է, որ ներկայիս միջազգային հարաբերությունների համակարգը ձգտում է նրան, ինչ տիրում էր Եվրոպայում 30-ամյա պատերազմի ընթացքում: Այդ խնդիրը, թերևս, այսօր վճռվում է Մերձավոր Արևելքում:

Աղբյուրներ և գրականություն

1. *Тер–Арутюнянц Г.,* «Пусковой механизм», Голос Армении, # 108(18760), 02.10.2001.
2. *Гриняев С., Чугунов В,.* «Международный терроризм как инструмент глобального управления», Agentura.ru., 10.12.2001.
3. *Абаринов В.,* «Время завоевателей», Совершенно секретно, #7(182), 2004.
4. *Մարջանյան Ա.,* «Էներգետիկան և աշխարհաքաղաքականությունը», 21-րդ Դար, 2003, #1, էջ 13: Терехов А., «Экономика восторжествует над геополитикой», Независимая газета # 5 (3118), 16 .01.2004
5. *Перл Р.,* «Прощай, ООН!», "The Spectator", 21.03.2003 (inosmi.ru); Линд М., «Таинственные фигуры стоят за войной Джорджа Буша», New Statesman, Lenta.ru, 7.04.2003; Սաֆրաստյան Ռ., ««Պահպանողականությունն ԱՄՆ-ում», Հանրա-

պետական, #7 (16), 2004:
6. *Межуев Б.,* «В преддверии великого ухода», Русский Архипелаг, (http://www.archipelag.ru), 2004.
7. *Фальков М.,* «Глобальный план капитолийских мудрецов», эл.-газета УТРО, 20. 02. 2003.
8. *Тер-Арутюнянц Г.,* «Иракская политика США: Ошибка аналитиков?», Голос Армении, #23,(18963) 04.03.2003.
9. *Тер-Арутюнянц Г.,* «Империализм как высшая стадия глобализма», Голос Армении, #53, (18993), 15.05.2003.
10. *Хантингтон С.,* «Столкновение цивилизаций», Москва, Изд-во "АСТ", 2003.
11. *Molander R. C,, Riddile A. S., Wilson P. A.,* «Strategic Information Warfare: A New Face of War», Reviewers' comments, RAND, 1996.
12. *Гриняев С.,* «Эффект бабочки: Философия войн XXI века по-американски», НВО, 340(364), 14.11.2003.
13. *Հարությունյան Գ.,* «ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում», Երևան, «Բավիղ», 2003:
14. «Британские войска не выполнили приказ американцев начать войну с Ираном», Lenta.ru, 30.06.2004.
15. *Панфилова В.* «Американцы хотят заменить в Ираке филипинцев на узбеков». Независимая газета, 27.07.2004; «Уже третий союзник США намерен вынести войска из Ирака», izvestia.ru 29.07.04.
16. *Hersh S. M.,* «Plan B», The New Yorker, 21.06.2004.,
17. «Турция разорвала военные контракты с США и Израилем», Lenta.ru:, 16.05.2004.
18. *Верлин Е.,* «Бушу советуют оккупировать Саудовскую Аравию», Независимая газета, #3(3116), 14.01.2004.
19. *Ван Хам П.* «Новые устремления Европы в области обороны: последствия для НАТО, США и России», Европейский центр по изучению вопросов безопасности им. Дж. Маршалла, VIB, 2001; Мартин С., «Новая Европа: видение и надежды», The Washington Times, inosmi.ru, 28.04.2004.
20. «Стратеги Пентагона разработали план действий против Сирии, КНДР и Франции», Lenta.ru, 13.01.2004.
21. *Տերտերյան Գ.* «Հետընտրական Ռուսաստան. բարեփոխումներ և մարտահրավերներ», Հանրապետական, #4(13), 2004:
22. *Тер-Арутюнянц Г.,* «Холодная война-2», Голос Армении, #139(19079), 09.12.2003; Տեր-Հարությունյան Գ., «ԱՄՆ-Ռուսաստան. Զարգացումները սառը պատերազմի համատեքստում», Հանրապետական, #2(11), 2004:
23. *Тер-Арутюнянц Г.,* «Этот монополярный многополярный мир», Голос Армении, #109(19049) 30.09.2003.
24. *Уайнштайн М.,* «Новый регионализм: на пути к многополярному миру», Power and Interest News Report, inosmi.ru, 08.06. 2004.

25. *Шунков В.* «Вооруженные силы стран мира», с. 301, Мн., ООО “Попурри”,2002; Джонсон Ч., Базы для американской империи, Los Angeles Times, inosmi.ru, 18.01.2004.
26. *Feith D.J.,* «Transforming the US Global Defense Posture», CSIS, December 3, 2003.
27. *Володин Дм.,* «Трансформация вооруженных сил США», НВО, # 18 (378), 21.05.2004.
28. «Новая военная концепция США: «10-30-30»», Washington ProFile, 14.04. 2004; Washington ProFile, #69 (429), 07. 07.2004; Washington ProFile, #74 (434), 16.07. 2004.
29. *Տերտերյան Գ.,* «Կենսատեղեկատվական պատերազմներ», Հանրապետական», #3(12), 2004:
30. *Попов И.,* «Сете-центрическая война Пентагона», НВО # 9 (369), 12.03. 2004
31. *Тер-Арутюнянц Г.* «Гиперпревентивная доктрина и генералы», Голос Армении #13 (18810), 14.02. 2002
32. «Доктрина Буша»,Washington ProFile, #61 (421), 12.06. 2004
33. *Տեր-Հարությունյան Գ.,* «ԱՄՆ ապագայի և առաջատիրության հետ կապված խնդիրներ», Հանրապետական», #7(16), 2004:
34. *Уткин А.,* «Американская империя», Москва, Изд-во Эксмо, «Алгоритм-Книга», 2003, Фергюсон Н., Британская империя: уроки для глобальной власти, Космополис #3(5), Осень 2003
35. *Conquest R.,* «Toward an Inglish-Speaking Union», The National Interest, Fall, 1999.
36. *Малеванный В.* «Глобальный электронный перехват», НВО, #15(237), 2001.
37. Внешнеполитические доктрины США , Washington ProFile, 11.02.2004
38. *Lewis B.,* «The Multiple Identities of the Middle East», London, 1998. Lewis B., «The Roots of Muslim Rage», The Atlantic Monthly, September 1990.
39. *Киссинджер Г.,* «Нужна ли Америке внешняя политика?», НИЦ «Ладом», 2002.
40. *Бжезинский Зб.,* «Великая шахматная доска», Москва, «Международные отношения», 1999,
41. *McNamara R.,* «In Retrospect» (The Tragedy and Lessons of Vietnam), 1995.
42. *Timothy Garton Ash,* «The fall of the vulcans» (Iraq may spell the end of an evangelical belief in American military power), The Guardian, 27.05.2004.
43. *Galtung J.* «The World in Year 2020», ACNIS, Yerevan, 03.05.2004.
44. *Панарин А.С.,* «Православная цивилизация в глобальном мире», Москва, “Алгоритм”, 2002.
45. *Храбрый.О,* «В шкуре Саддама», Эксперт, #15, 2004.
46. *Хантингтон С.,* «Кто мы?: Вызовы американской национальной идентичности», М.: Изд-во АСТ, 2004.
47. *Делягин.М.,* «Предпосылки кризиса в США», ПОЛИТ.РУ, 14.10.2000.
48. *Неклесса А.,* «Управляемый хаос», http://www.archipelag.ru, 2004; 21 Дар, #3(5), 2004
49. *Арзуманян Р.,* «Метафора нелинейности в социальных системах», 21 Дар, #2(4), 2004.

50. *Тер-Арутюнянц Г.,* «США-Иран: точка информационного невозврата?», Голос Армении, #95(19035), 28.08.2003; Тер-Арутюнянц Г., «Израиль-Иран: возможен ядерный конфликт?», Голос Армении, #133(19073), 25.11.2003
51. *Чернов М.,* «Американцы нацелились на Иран», RBC daily, 23.07.2004

Օգոստոս, 2004թ.

НЕКОТОРЫЕ ПОЛОЖЕНИЯ СТРАТЕГИИ США В КОНТЕКСТЕ ИРАКСКОЙ ПРОБЛЕМЫ

Гагик Арутюнян

Резюме

До и после оккупации Ирака появилось множество информационных и аналитических материалов, посвященных различным аспектам стратегии США в контексте происходящих на Ближнем Востоке процессов. Данная работа - схематический обзор части этой информации. Исходным является предположение, что ситуация в Ираке близка к критической. Вместе с тем проблемы, с которыми столкнулись Соединенные Штаты, относятся к разряду системных, т.е. к таким, с которыми должна была столкнуться империя после определенного эволюционирования своих цивилизационных и геополитических представлений. Развития на Ближнем Востоке привели к сдвигам не только регионального масштаба, но и инициировали процессы, которые по их значению следует отнести к глобальным.

Чтобы представить идеологическую среду, в которой формировалось решение по объявлению войны Ираку, в статье систематизированы и анализированы те мотивы, которые подтолкнули США к военным действиям на Ближнем Востоке. Делается вывод, что в процессе принятия этого решения важную роль сыграла имперская геополитическая и геоидеологическая логика, а также отождествление на цивилизационном уровне национальных интересов США и Израиля. В этом контексте должное внимание уделяется деятельности “неоконсерваторов” и некоторых религиозных направлений.

В работе представлены те военно-политические доктрины и технологии, которые США применяют для реализации своих проектов. Высказывается предположение, что в долгосрочной перспективе США будут делать ставку на свои преимущества в военно-технологической сфере и на союз с англоязычными

народами. Особое внимание уделяется “гиперпревентивной” доктрине, которая представляет как бы философию американской стратегии 21 века.

Показано, что военная кампания на Ближнем Востоке и последующие развития привели к заметному ухудшению информационного имиджа Америки, расшатали сплоченность “антииракской коалиции”. Наряду с этим усугубились противоречия между США и ЕС, Россией, Китаем, т.е. странами, которые выступают против американской политики в Ираке. В этом аспекте подчеркивается особая роль Ирана в региональных развитиях. В результате развитий в Ираке ускорились процессы по формированию центров политической воли, которые оказывают солидаризированное сопротивление устремлениям Соединенных Штатов. Высказывается предположение, что ЕС, Россия и Китай накопили достаточный потенциал для того, чтобы при определенных условиях бросить вызов американской военно-политической монополии. На этом основании делается вывод, что иракская кампания положила начало тенденциям по формированию многополярного мира.

Вышеприведенные тенденции активизировали обсуждение различных сценариев, согласно которым США уступают свои позиции единоличного мирового лидера. Утверждается, что при соблюдении прагматичных подходов американцы обладают достаточными ресурсами для обеспечения плавного изменения статуса гипердержавы. Представлены и “жесткие” схемы развития, содержащие большую долю иррационализма и исходящие из концепции “управляемого хаоса”.